

ԳԻՐՔ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ

Երբ փոքրիկ սիրտը նման ովկեանի,
Դիր նարեկի գիրքը վրան պահպանակ.
Ամեն մեկ բառ ջերմ արտասուք է սուրբի,
Արքայութեան աղբիւրի պէս անապակ:

Երբոր լարեն քեզ պատանքի որդայք,
Աղօթք խնդրէ իմաստութեան խօսքերով.
Աչքերուդ մէջ պիտի հոսի նառագայք,
Հալածելու դեւերն իրենց շարքերով:

Երբ քայլերուդ օձն հետեւի դաւադիր,
Անէծքի տեղ՝ էջ մը կարդա նարեկէն.
Պիտի հասնի հրեշտակ մը քեզ կարեկիր,
Բարձր ընելու երկու քեւերն ոսկեղէն:

Երբ վիշտ, տենչանք, քայսիծ ունիս ու կարօտ,
Սեղմէ ուժգին կուրծքիդ նարեկն արցունքով.
Պիտի տեսնես երազներուդ առաւօտ,
Եւ քեզ համար՝ ծնրադիր սուրբն աղօթքով:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ

Դուն ողորմութիւնն Աստուծոյ ցանցար,
Շղթաները ժա՛նտ խորտակեցիր դուն.
Է՛ր իմաստութեամբ բու խօսքըդ պայծառ,
Կենսունակ էր ան՝ շունչով Սո՛ւրբ Հոգւոյն:

Անմօրուս, փափուկ էիր պատանեակ,
Խուժանը վայրագ ըզքեզ հարուածեց,
Ըզքեզ քարկոծեց փակուած դրբան տակ,
Անարգեցին քեզ կրտսեր ու երէց:

Քարը կ'այրէ դեռ ա՛փը Սաւուդի,
Նայուածքդ վերջին զինք կը տանջէ դեռ.
Անո՛յշ պատանեակ, լոյսի դուն ուղի,
Քեզ արիւնլուայ գրկեց Ի՛նքըն, Տէր:

ՀՐԱՉ ՔԱՋԱՐԵՆՑ

• ԳՐԱԽՈՍԱԿԱՆ •

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅԻ: Ռ. Ա. Աբրահա-
մեան, Բ. Ե. Թումանեան, Թ. Խ. Յա-
կոբեան, Ս. Տ. Մելիքալսեան: Լա-
թակազմ, փոքրածալ (16), պատկերա-
դարձ, էջք 134: Երևան, 1958:

Մաքուր տպագրութեամբ եւ ընտիր
թուղթով՝ փոքր, ներկայանալի հատորիկ
մըն է ասիկա, նուիրուած հին մեծանուն
վաստակաւոր հայ գիտնականին: Աշխա-
տանքը կատարուած է հանրամատչելի ձե-
ւով, եւ կ'արժէ որ արտասահմանի մէջ
վերստին հրատարակուէ՛ր՝ մեր ուղղա-
դրութեամբ:

Յաճախ կ'ըսուի որ Շիրակացիէ առաջ
գիտնականներ չկային Հայաստանի մէջ:
Ասոր հաւատալ քիչ մը դժուար է, մանա-
ւանդ երբ նոյն իսկ Շիրակացի ինքն իսկ
կը վկայէ իր նախնական կրթութիւն ըս-
տացած ըլլալը «Շիրակաւանի» դպրոցին
մէջ: Այդ նախնական կրթութեան մէջ էր
անշուշտ այն ճաշակը՝ զոր Շիրակացին
ստացաւ արտաքին գիտութիւններու հան-
դէպ, որ անտարակոյս իր մէջ սաղմնաւո-
րեց գիտութեան յարգն ու սէրը, զինքը
վերջապէս մեծ գիտնական մը ընելով:
Դարձեալ Շիրակացի կը վկայէ որ զնաց
Զորրորդ Հայք եւ Քրիստոսոստոս անունով
հայ գիտնականի մը մօտ սորվեցաւ վեց
ամիս: Արդարեւ, կրնայ Շիրակացիի ը-
սածին պէս, Քրիստոսոստոսի գիտութիւնը
«ստորի եւ անտի ծայրաքաղ» ըլլալ. այ-
սուհանդերձ չափով մը գիտուն էր. նոյն
ստեղծ ապացոյց՝ որ Շիրակացիէն առաջ
կային արտաքին գիտութիւններով զրա-
դող հայ գիտնականներ: Եւ եթէ նոյն իսկ
Շիրակացիի ըսածին պէս՝ Քրիստոսոստոս
թուարանագէտ չէր, անհաւանական կը
նկատեմ որ Հայաստանի մէջ թուարանա-
գէտներ չըլլային, երբ մանաւանդ նկատի
առնենք որ ճարտարապետութիւնը մեծ
չափերով զարգացած էր Հայոց մէջ: Ա-
սիկա ապացուցանելու համար մենք ու-

նինք բաղմամբիւ հին ճարտարապետական
կոթողներ, զորս կարելի էր առանց թը-
ւարանական եւ երկրաչափական բարդ
հաշիւներու կառուցանել:

Ուրախ ենք նկատելու որ հին ու սխալ
վարկածը՝ Շիրակացին Կ. Պոլիս տանող՝
այս աշխատութեան մէջ մերժուած է:
Կ'ըսուի ճշտութեամբ որ Շիրակացին
«դեռ Պոլիս չհասած, Սինոպ քաղաքում
հանգիպում է իր հայրենակիցներին...»: Լսելով
ծանօթների խորհուրդը, Շիրա-
կացին կէս ճանապարհից վերադառնում է
Տրապիզոն» (էջ 18):

Եւ որովհետեւ Շիրակացին կը գանգա-
տի իր ժամանակուայ խաւարամիտներուն
մօտին, ներկայ աշխատութեան մէջ՝ զը-
րոյնները՝ իրենք իրենց տուած են ազա-
տութիւնը ենթադրելու թէ Շիրակացիի
«տիեզերադիտական աշխատութիւնները
ժամանակի ընթացքում ենթարկուել են
մեծ կրճատումների, նրանից դուրս են
հանուել ամբողջ գլուխներ եւ հատուած-
ներ: Իշխող եկեղեցական պաշտօնական
զաղափարախօսութեան ներկայացուցիչ-
ներն այդ կատարել են միտումնաւոր կեր-
պով՝ ցանկանալով թոյլ չտալ, որ Շի-
րակացու զաղափարները տարածուեն եւ
լայն քաղաքացիութիւն ստանան»: Ասի-
կա, բնական է, ձրի ամբաստանութիւն
մըն է: Շիրակացու աշխատանքները շատ
անգամ զրիչներէ անըմբռնելի դործեր
էին, եւ հաւանաբար այս ու այն զրիչը՝
այս կամ այն անըմբռնելի մասը չէ ար-
տադրած կամ սխալ արտադրած է: Շի-
րակացիի թուարանական աշխատանքնե-
րուն նուիրուած իմ մէկ հին գրչագրիս
մէջ՝ զրիչը քանիցս կը խոստովանի որ
թէեւ կ'օրինակէ, սակայն ինչ բան օրի-
նակած ըլլալը՝ չի գիտեր: Ասիկա կը
հաստատուի անով՝ որ ան աղիւսակները
օրինակած է երկու անգամ, տարբեր ձե-
ռագիրներէ, անգիտութեամբ: Եթէ կան
կորսուած, պակասող, հաշմուած աշխա-
տանքներ Շիրակացիէն, ատոնց կորուստը
եւ փճացումը պէտք է վերագրել այն պայ-
մաններուն՝ որոնց պատճառաւ նոյն իսկ
սրբազան զրքեր ու նիւթեր պարունակող

զբաղվել են մեղի հասած չեն 5, 6, 7, 8 եւ 9րդ դարերէն: Ասոնց մեղի հասած չըլլալը՝ բնական է՝ չենք կրնար վերադրել իշխող եկեղեցական... միտումնաւոր վերահսկման: Այս ըմբռնումը այլեւս տպւիչի մը պէս՝ հասնողին բերնին ծամոց եղած բառաշարքով՝ յաճախ կ'երեւի մեր զրոյցներուն քով: Եթէ եղնիկի «Եղծ Ազան-դոց»ը մեղի հասած է Ժէ-դարեան ՄիԱԿ օրինակով մը, ասիկա չի նշանակեր որ այդ աշխատութիւնը հալածուած էր: Սակայն եւ այնպէս՝ մեղի չէ հասեր:

Շիրակացիի մասին այս ամփոփ աշխատութիւնը շահեկան է, եւ առ հասարակ ընթերցանութեան համար՝ յանձնարարելի գործ: Մաղթենք որ ամէն հայ ընթերցող օրինակ մը ունենայ եւ կարդայ:

* * *

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ: Նաղաշ Յովնաթան: Ժողովածոն պատրաստեցին Շ. Նազարեան եւ Ասատուր Մնացականեան: Լաթակազմ, ութածալ, գունաւոր եւ անդոյն նկարներով, էջք 34 + 338: Երեւան, 1961:

Մեծարժէք ու ընտիր գործ մը՝ որ, ասիսո՛ւ, տպագրուած է վատորակ թուղթի վրայ:

Յովնաթան Նաղաշ, որ արդէն մեղի տարիներ առաջ ներկայացուած էր ողբացեալ Արշակ Զօպանեանէ, ինչպէս նաեւ Հ. Ներսէս Ակինեանէ, այսպէս ահա կ'ունենայ զիտական զնահատելի հրատարակութիւն մը՝ հմուտ ուսումնասիրութեամբ մը արժէքաւորուած:

Նաղաշ Յովնաթան տաղանդաւոր բանաստեղծ եւ նկարիչ, ծնած է Ապրիլի, 1661ին. ղերախտաբար իր կենսագրութիւնը ճոխ չէ մանրամասնութիւններով: Նազարեան եւ Մնացականեան քաջարար կը քանան թուականներ կորզել մանր վերաբերութիւններէ, եւ ասիկա կը կատարեն բաւական յաջողութեամբ:

Յովնաթանեանք 250 տարուան ընթացքի մը մէջ եղեր են կարող եւ սիրուած նկարիչներ. Յովնաթան Նաղաշ հիմնա-

զերը եղած կ'ըլլայ Տունի մը, 1682ին կատարած մանրանկարչական իր անդրանիկ փորձով, որ մնացած է ձեռագրի մէջ, այժմ պահուած Երեւանի Պետ. Մատենադարանին մէջ:

Հետզհետէ կը վերաւեր Նաղաշ Յովնաթանի բանաստեղծական արուեստը՝ սակայն մանրանկարչական կամ նկարչական կարողութիւնը անտեսուած է, քանի որ զորքը նուիրուած է բանաստեղծական արտադրութեան:

Էջ 504 կը տրուին Նաղաշ Յովնաթանի Սիրոյ տպերը եւայլն. ձեռագրական մանրակրկիտ համեմատութեամբ: Այդ տպերախտ եւ բաղմաշարքը զորքին համար՝ մենք, բնական է, խորին չորհուրդաւորութիւն ունինք Նազարեանին ու Մնացականեանին: Մենք իրապէս կը զնահատենք իրենց երկասիրութեան այդ մասը: Կը տրուին ընդամենը 81 տաղ, այս բաժնին մէջ:

Էջ 213ով կը սկսի յաւելուածներու մասը: Նախ կը տրուին Յովնաթանի որդի Յակոբ Նաղաշէ 21 տաղ, յետոյ երեք տաղ՝ Ստեփանոս Ծոռութեցիէ:

Էջ 251ով կու գան խղճամիտ եւ մանրամասն ծանօթութիւններ՝ իւրաքանչիւր տաղի մասին: Էջ 295ով կը տրուին օգտագործուած ձեռագրերի մասին ծանօթութիւններ (59 զբաղվել):

Էջ 317-331 բառարանն է, չափ կարեւոր եւ մեծարժէք:

Վերջապէս զորքը կ'աւարտի նկարներու եւ բանաստեղծութեանց այբուբենական ցանկերով:

Կը փակեմ զնահատելի աշխատութիւնը՝ մեծ գոհունակութեամբ: Լաւ կատարուած կարեւոր գործ մըն է:

Նազարեան եւ Մնացականեան նկատելի ունեցած Նաղաշ Յովնաթանի եւ Յովնաթանեաններու մասին Եւրոպայի մէջ եղած հրատարակութիւնները: Ոչ ալ նրկատի առած են Պետական Մատենադարանին զուրս գտնուած զբաղվելները: Ասոր՝ բացատրութիւն մը չէ տրուած, եւ ինքս կարող չեմ որեւէ կորակացութեան յանդիւ այդ մասին:

ԱԻՒՅԵՆՆԱՆ ԵՒ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ: Գրեց Աւետիս Շահումյան: Փոքր ութածալ, լաթակազմ, էջք 182: Երեւան, 1960:

Այս այն զերքերէն է՝ որ կարգացող հաճելի անակնկալի մը կը հանդիպի:

Աւելցնեմ, Ապու Սինա, կամ աւելի ճիշտ՝ Իրն Սինա, միջնադարին նշանակութեամբ մեծարժէք հեղինակութիւն մըն է, որ ապրած է 10-11րդ դարերուն:

Հեղինակը լայն ճակատով կը մօտենայ հարցին: Նախ կը ծանրանայ Վերածնունդի Հայկական շրջանին մասին: Բնական է՝ առարկելի եւ քիչ մըն ալ բռնադրօսիկ կը գտնենք հասարակական տեսութիւնները, որոնց կարգին՝ աւատականութեան քայքայման եւ իրր թէ՛ զիւղացիական շարժումներու բացատրութիւնները:

Նախ՝ հայկական Վերածնունդը մասնաւորապէս է Մերձաւոր Արեւելքի այդ շարժումին, որ սկսաւ տասներորդ դարուն: Ունի իր տեղական երեւոյթը. սակայն, խոշոր շարժումի մը, միջնադարին շարժումի մը արդիւնքն էր: Հոս, բնական է, ո՛չ տեղին է եւ ո՛չ ալ հարկ կայ այս մասին ծանրանալու: Միայն բնեք որ եթէ Արարական Խալիֆայութիւնը կը կորսնցնէ իր կեդրոնացեալ բռնատիրութիւնը, անոր տեղ առաջ կու գային կեդրոնախոյս ուրիշ բռնատիրութիւններ, որոնք կը ծաւալէին Եդիպտոսէն մինչեւ Տերպլեմ: Տնտեսական զարգացումը աւելի կը յիշուի այդ զարաշրջանին պարզապէս անոր համար՝ որ աւելի վերաբերութիւններ հասած են մեղի այդ առնէն: Վերջապէս սխալ է աւագակային ամէն շարժում վերադրել զառակարգային պայքարի, երբ մանաւանդ անոնք կազմակերպուած էին լոկ զոդնալու, կողոպտելու համար: Ոչ ալ զաւանակաւ ամէն հերձուած, քրիստոնէական թէ՛ իսլամական, կարելի է զառակարգային ըմբոստութիւն եւ շարժում նկատել: Ատով՝ ոչ թէ ամէն աւագակութիւն եւ տարօրինակութիւն կարելի է բարձրացնել զառակարգային պայ-

քարի, այլ միայն կարելի է զառակարգային պայքարի զաղափարաբանութիւնը ծիծաղելի դարձնել:

Հեղինակը առաջ կը բերէ բաղմաթիւ գեղեցիկ մէջբերումներ՝ Ռութաքինէն, Ֆրիկէն, Օմար Խալաֆէն: Հեղինակը զառակարգային պայքար կ'ուզէ տեսնել հոն, մինչ ատիկա յաւիտենական ցանկութիւնն է մարդկութեան խղճի ազատութեան, մարդկայնութեան, արդարութեան, զրութեան. բաներ որոնք ամէնէն յաջող դասակարգային դրութեան մէջ իսկ չառաջար կը պահսին՝ ինչպէս կը պահսին մարդկութեան ամէն կարգերուն մէջ:

Գրքին երկրորդ մասն է (էջ 80էն սկսեալ) որ նուիրուած է Աւելցնեմայի կէտնքին ու թողուցած զրական ժառանգութեան:

Շահումյանեան Աւելցնեմային ծանօթ առաջին հայ հեղինակը կը նկատէ Միւթար Հերացի մեծահամբաւ եւ կարող հայ բժիշկը, բնագետ եւ մտածող, որ Իպն Սինան կը ձանձնայ հայացած «Սինայի որդի» ձեւով: Միւթար Հերացիէն վերջ՝ Ամիրտովլաթ Ամասիացին է, որ օգտուած է Իպն Սինայէ: Ան ալ Միւթար Հերացիի պէս՝ զայն «Սինայի որդի» կը կոչէ: Մենք այսքանը բաւական չենք նկատեր: Կարելի չէր որ Աւելցնեմայի մասին մեր մօտ աւելի ընդարձակ ծանօթութիւններ չըլլային: Սակայն, ղերախտ իրականութիւնն է այն՝ որ միայն այսքան ծանօթ է առ այժմ:

Շահումյանեանի զորքը շահեկան է եւ արժէքաւոր: Ինձի համար ատիկա տեսակ մը ստատ է անցեալ դարու մտաւորականութեան՝ որ գոնէ այդքան ուշ յարգել չէ զիտեք Մերձաւոր Արեւելքի այդ մեծ խորհողին եւ չէ ներկայացուցեր մեր զրականութեան:

Կը ցաւիմ որ Շահումյանեան ստիպուեր է պոէմ, անտիկ, սյուժէ, դրամատիքով, սխալաստիկա, եւայլն, սարսափելի եւ խժալուր անհարգատուութիւններով խաթարել մեր սրբացած հայերէնը: